ԳԱԼՖԱ ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳԸ՝ ԻԲՐԵՎ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է. Գ.

XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարում առկա են եղել պահպանողական գործիչները կամ հեղափոխականները, որոնք, սակայն, ցայսօր որպես այսպիսիք չեն առանձնացվել: Նրանց կարելի է այդպես կոչել, քանզի ձգտում էին ազատագրական պայքարը կամ հեղափոխությունն այնպես կազմակերպել, որպեսզի հնարավորինս ավելի շատ պահպանվեր և չքայքայվեր արևմտահայ տարրը: Պահպանողական-հեղափոխականները եղել են թե՛ հայ քաղաքական կուսակցությունների սկզբնավորումից առաջ և թե՛ նրանց գործունեության շրջանում՝ հաճախ անդամագրվելով դրանց: Բայց, ընդհանուր առմամբ, մինչև XX դարասկիզբը, նրանց ծրագրերը չեն իրականացել հիմնականում մեկ պատճառով, այն է՝ հայ ազատագրական պայքարն ավելի շատ ունեցել է մեծ տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա մասնակի դրվագներով սևեռելու միտում:

Պահպանողական-հեղափոխականներն իրենց գործունեությունը փորձել են նպատակաուղղել հետևյալ հիմնական խնդիրների իրականացմանը.

1. Ժողովրդի մեջ կրթության և լուսավորության աշխատանքներով արմատավորել ազգային-ազատագրության անհրաժեշտության համոզմունքը:

2. Գաղտնաբար զինելով՝ ժողովրդին նախապատրաստել ինքնապաշտպանության կամ պատեհ առիթի դեպքում՝ ընդհանուր ապստամբության:

3. Հայ ազգային-ազատագրական պայքարը չառնչակցել մեծ տերությունների հետ և չդիմել տարանջատ ձեռնարկումների՝ այդ տերությունների միջամտության հույսով:

4. Արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի համար ձեռք բերել արևելահայերի գաղտնի օժանդակությունը:

5. Ամեն կերպ ջանալ թուրքական կառավարության համար հայոց ջարդերի առիթներ չստեղծել:

6. Ձգտել հասնելու Թուրքիայի այլազգիների և մասնավորապես քրդերի համագործակցությանը:

XIX դ. վերջի հայ ազատագրական պայքարի մեջ առաջին պահպանողական-հեղափոխականներից էր գալֆա Հակոբ Սարկավագը (Հակոբ Տեր-Ղևոնդյան): Նա Մշո դաշտի Օրկնոց գյուղից էր, ծնվել է 1840 թ.: Սովորել է Ս. Կարապետի Ժառանգավորաց վարժարանում, ապա՝ Կ. Պոլսի Կալաթասարայի լիցեում: Սարկավագը զբաղվել է ակտիվ հասարակական և հայրենանվեր գործունեությամբ: Հետաքրքիր է, որ Կ. Սասունին Սարկավագի գործունեությունը կամ անձը գնահատում է Իսրայել Օրու և Հովսեփ Էմինի հետ համեմատության մեջ դնելով: Նա գրում է. «Մեր ազգային կյանքի մեջ գրեթե երրոդություն մը կը կազմեն, ժամանակի կարգով

Իսրայել Օրի, Էմին և Խալֆա Հակոբը: Եվ սակայն անոնք իրարմե շատ կը տարբերին: Իսրայել Օրին քաղաքական միտք մըն է, խորամանկ, հանճարեղ և ստեղծագործող, որ իր հայրենասեր կորովը անհաղթելի ժայռերու և առապարներու վրան կը խորտակե ու կը փշրե: Էմինը քաջակորով սիրտ մըն է, ուր հայրենասիրությունը և բախտախնդրությունը կեփին ու կը պոռթկան երբեմն քանդելով իր իսկ ստեղծագործած սպանական դղյակները: Խալֆա Հակոբը հարազատ բույսն է իր հողին ու ջրին: Հայրենասեր է և հեռատես, հանդուգն է և համեստ, լավ կը ճանչնա իր շրջապատը, գիտե իր ընելիքը և կը զգա իր առջև բարձրացող ահավոր խութերը: Կը տեսնի իր շուրջի գիտակցական խավարը և սակայն կը գործե, կը հուսա և կը տատանի, մինչև որ անհասկացողության մը հետևանքով, կրքոտ և անիրավ հարվածի մը զոհ կերթա»[1]:

Իսրայել Օրին և Հովսեփ Էմինը հանրածանոթ են մեր հանրությանը, իսկ սարկավագը՝ ոչ, թեպետ չափազանց խոհեմ և հեռատես գործիչ էր: Նա հայոց ազատագրման հույսը ոչ թե առաջին երկուսի նման կապում էր օտար տերությունների օգնության հետ, այլ գործում էր ապավինելով սեփական ուժերին, հույսը դնում էր իր ժողովրդի մարտական կորովի վրա, նրան նախապատրաստում էր գաղտնորեն՝ ձգտելով խուսափել ամեն մի ժամանակավրեպ ձեռնարկից: Ազգապահպանության խնդիրը նրա համար լուծելի էր միայն ազգային հեղափոխության ճանապարհով, որը կբերեր ազգային ազատագրություն, բայց այդ հեղափոխությունը նրա համար օրերի խնդիր չէր, այլ՝ տնական, տքնաջան և զգույշ աշխատանք էր պահանջում, այնպիսի աշխատանք, որ հայ ժողովրդին զերծ պահեր ջարդերի առիթներից: Մեծ տերությունների աջակցության որոնումը նրա համար երկրորդական խնդիր էր, քանի դեռ ազգը հոգեպես և զենքով նախապատրաստված չէր:

Սարկավագը արդեն 1880-ական թթ. սկզբից փորձում էր գաղափարական և զինման աշխատանքներով կազմակերպել ժողովրդի ինքնապաշտպանությունը և ստեղծել հայ-քրդական համագործակցություն: Շեշտենք, որ նա առաջին խնդիրը երկրորդից չէր զատում՝ հասկանալով, որ քրդերը արևմտահայությանը զինելու հիմնական խոչընդոտներից էին: Կարելի է ասել, որ Սարկավագին քարոզչության միջոցով հաջողվում է հայության կողմը գրավել քրդական որոշ աշիրեթների՝ բալաքցիներին, պտրցիներին, տափեցիներին, Շեկո տան քրդերին և այլոց: Սրանք նրա գաղափարին «հավանություն կուտան, պայմանով, որ ինք ջանա զենք մատակարարել անոնց»[2]:

Սարկավագը քրդերի հետ պատրաստում է բողոքագիր՝ թուրք կառավարությանը ներկայացնելու համար: Բողոքագիրը հետևյալ կետերն էր բովանդակում. «ա) ոստիկանությունը ազգաբնակչության թվի համաձայն ընտրվի հայ, քյուրտ և թուրք տեղացիներեն, բ) աշարը (հացահատիկներու տուրքի աճուրդը) ծախվի միայն գյուղացիներին և ոչ թե թուրք բռնակալ և վաշխառու մյուլթազիմներուն, գ) ամեն մի հայ և քյուրտ գյուղի մեջ մասնավոր իջևան մը կառուցվի պետության և տեղացիներու հավասար օժանդակությամբ, դրամականը պետութենեն, իսկ աշ-

---

[1] **Սասունի Կ.,** Պատմություն Տարոնի աշխարհի, Պեյրութ, 1957, էջ 413:

[2] **Բդեյաններ Ս.** և **Մ.,** Հարազատ պատմություն Տարոնո, Գահիրե, 1962, էջ 71:

խատանքը գյուղացիներեն և այս շենքերը ծառայեն իբրև բնակարան, երբ ոստիկաններ կամ զորքեր գյուղերու մեջ խոնախ լինեն, դ) քյուրդ և հայ գյուղերու մեջ դպրոցներ բացվին ուսուցման համար»[3]: Այսպիսի խելացի պահանջներ առաջ քաշելով, որոնք շոշափում էին նաև քրդության շահերը, Սարկավագը, բնականաբար, շահելու էր նրա որոշ խավերի համակրանքը:

Նա գործում էր Մշո դաշտում, ինչպես նաև Խնուսում և Կարինում, որտեղ սերտ հարաբերություններ է ստեղծում Խաչատուր Կերեքցյանի հետ: Այստեղ Կովկասից եկած Ներսես Իշխանյանի հետ նա ստեղծում է «Հայ հեղափոխական ընկերություն» կազմակերպությունը: Կարինից անցնելով Դերսիմ՝ աշխատանքներ է տանում այնտեղի կարծր երկաթից Սասուն փոխադրելու համար, որպեսզի զենքեր պատրաստել տա՝ խառնելով Սասունի երկաթին: Նա «Տերսիմեցիներու հետ հարաբերություն հաստատելե և հասկացողության գետին պատրաստելե հետո, անոնց քով ձգեց նաև Տեր Գաբրիել Վեհյան անունով քահանա մը՝ իբր հրացան նորոգող վարպետ մը և վերադարձավ Կարին, ուրկե ալ առանց կառավարության արտոնության (քանի որ ձերբակալվելուց և 1884 թ. ազատվելուց հետո իրավունք չուներ Մուշում ապրելու - Հ. Է.), գաղտնի վերադարձավ Խնուս և ապա՝ Մուշ, ուր երկու ազգերու (հայ և քյուրդ) համերաշխության քարոզչությունը առաջ կը տաներ և իրավունքները՝ իրենց ձեռքով պաշտպանելու համար, իրարու հետ սերտ գործակցության կը մղեր»[4]:

Այսպիսով, Սարկավագը գաղտնի նախապատրաստական ուղին նախընտրել է, անշուշտ, երկու շարժառիթներից դրդված, նախ՝ զգալով ջարդերի մոտալուտ վտանգը, որից փրկության ելքը համընդհանուր զինումն էր և երկրորդ՝ մասնակի ձեռնարկների անհեռանկար լինելու և համընդհանուր ըմբոստության անհրաժեշտության գիտակցումով:

Սակայն Թուրքիայի ազգային դաժան քաղաքականության պայմաններում նման ծրագրերի իրականացման դժվարություններն անպայմանորեն պետք է հանգեցնեին արևելահայության օժանդակության որոնումներին: Այդ որոնումների արդյունք էր Սարկավագի անցումը Կովկաս՝ 1890 թ.: Դաշնակցական գործիչ Մ. Շաթիրյանը գրում է. «Նա այն մարդկանցից էր, որոնց Խրիմյանը պարբերաբար ուղարկում էր Կովկաս՝ տեղեկություն տալու երկրի դրության մասին և հետաքրքրքրություն շարժելու դեպի հայ ժողովրդի ծանր վիճակը»[5]: Սարկավագի՝ Կովկաս անցնելու օրերին, երբ սկսել էր ձևավորվել Դաշնակցությունը, Ս. Կուկունյանը նախապատրաստում էր իր արշավանքը Արևմտյան Հայաստան, որն արևելահայոց կողմից արևմտահայ ազատագրական պայքարին օժանդակելու ձգտման առաջին արտահայտություններից էր: Ս. Կուկունյանը, անտեղյակ լինելով Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակին, սարկավագին խնդրում է աջակցել իրեն որպես ուղեցույց և խորհրդական: Սակայն, վերջինս դեմ է լինում այդ ձեռ-

---

[3] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 417:

[4] **Բդեյաններ Ս.** և **Մ.,** նշվ. աշխ., էջ 74:

[5] Հայ հասարակական շարժումների պատմությունից, Մ. Շ.-ի հուշերը, գրի առավ Ն. Հանգույց (Հայրենիք, Բոստոն, 1923, N 6, էջ 62):

նարկին՝ գտնելով որ «…առանց նախապատրաստական աշխատանքների անհնար է բազմամարդ խմբով Թուրքիա անցնել և ակնկալված օգնությունը հասցնել Թուրքիո մեջ ապրող մեր եղբայրներին: Նախապես,- պնդում է Հակոբը,- պետք է կազմակերպել խմբի ճանապարհի վրա ընկնող հայ գյուղերը և հետո միայն մտածել խմբի արշավանքի մասին: Խումբը խոմ թռչուն չէ, ու սահմանը անցնի իր ուզած տեղից»[6]:

Դժբախտաբար, սարկավագի այս ճիշտ նկատառումները հետագայում անտեսվեցին, որի հետևանքով Դաշնակցության կազմակերպչական աշխատանքները սակավարդյունք եղան: Սարկավագ-Կուկունյան տարաձայնությունները վկայությունն են այն բանի, որ *հայ ազգային-ազատագրական պայքարը սկզբնավորվում էր նրանում առկա տարբեր ուղղությունների բախումներով:* Գաղտնի աշխատանքներով ընդհանուր նախապատրաստման ուղղության ներկայացուցիչները կամ պահպանողական-հեղափոխականները հենց սկզբից կասկածում էին հայդուկային խմբերով մարտավարության հաջողությանը: Հայ ազգային-ազատագրական պայքարի արևելահայ պատկերացումները հախուռն էին, փութկոտ և ռոմանտիկ երանգներով, այսինքն՝ ավելի գերակշռող էր զուտ զգացմունքային կողմը, իսկ դա չէր կարող ընդունելի լինել արևմտահայ իրապաշտ գործիչների կողմից: Կարծում ենք՝ նաև սրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ գոնե մինչև 1904 թ. *հայ-ազգային-ազատագրական շարժումն ընթացավ պայքարի և որոնումների ուղիով:* Անհրաժեշտ էր որոշ ժամանակահատված՝ այս ուղղությունների արդյունքները պարզելու համար և ցույց տալու, թե դրանցից որն էր նախընտրելի: Ս. Կուկունյանի արշավանքը ցույց տվեց, որ ճիշտ էին սարկավագի նկատառումները: Այդ արշավանքի անդամների վերաբերյալ Ռոստոմի դիտողությունները վկայում են, որ նրանց մեջ գերակշռում էր զգացմունքայինը. «Մի բան նրանց համար շատ պարզ էր,- գրում է նա,- Հարկավոր էր արյուն թափել, հարկավոր էր վրեժխնդիր լինել բազմաթիվ անմեղ զոհերի անբիծ արյան համար: Սա մի տարերային հոսանք էր, ազնիվ, վեհ, ոգևորիչ հոսանք, որի առաջն անկարելի էր առնել ոչ մի հորդորանքով, ոչ մի խելացի պատճառաբանություններով, ոչ մի սարսափելի ապագայի նկարագրություններով»[7]:

Միանգամայն պարզ է, որ ինչքան էլ սարկավագի պատճառաբանությունները իրատեսական լինեին, Կուկունյանը դրանք չէր ընդունի: Ուստի և նա կարգադրում է սպանել սարկավագին (որը, անշուշտ, հնարավոր չէ արդարացնել). «Սարկավագը չէր ուզում երկիր անցնել, մինչդեռ Կուկունյանի անդիմադրելի փափագն էր այդ: Ալեքսանդրապոլում Կուկունյանը պատվիրում է հարմար տեղ հասնելիս՝ «վերջացնել» Սարկավագին»[8]: Սա հետևանք էր ընդհանուր հեղափոխության կամ ապս-

---

[6] Արամայիս Ազնավուրյանի հուշերը (Հայրենիք, 1937, N 5, էջ 139), տե՛ս նաև **Ներսիսյան Աշ.,** Ազգային-ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ., Ե., 1999, էջ 23-24:

[7] Տե՛ս Ռոստոմ, մահվան վաթսունամյակին առթիվ, Պեյրութ, 1979, էջ 48:

[8] **Մարտիրոսյան Հովսեփ** (Աբգար Պետրոսյան), Հուշեր Կուկունյանի արշավանքից, գրի առավ Ա. Ամուրյան (Հայրենիք, 1944, N 6, էջ 109), Արամայիս Ազնավուրյանի հուշերը, էջ 139:

տամբության կազմակերպման և հայդուկային ուղղությունների միջև եղած առաջին բախումների:

Կուկունյանը 1890 թ. սեպտեմբերին կազմակերպում է իր արշավանքը, որն ավարտվում է անհաջողությամբ: Այդ մասին Ռոստոմը գրում է. «Անծանոթ լինելով բոլորովին երկրին (ուղեցույցները դժբախտաբար հենց արշավանքից փախած են լինում), խումբը շատ դեսուդեն ապարդյուն թափառելուց հետո, քաղցած, ծարավ՝ որոշում է անդամների մեծամասնությամբ վերադառնալ Ռուսաստան՝ գարնան նոր արշավանքի պատրաստվելու համար: Սահմանագլխի Խար գյուղում ընդհարում է տեղի ունենում սահմանապահ ռուս կազակների ու կուտակված քրդերի հետ ու խումբը ցրվում է: Մի մասը ձերբակալվում է կառավարության ձեռքով, դատվում և դատապարտվում է»[9]:

Իհարկե, չի կարելի չգնահատել Ս. Կուկունյանի արշավանքը՝ որպես արևմտահայ ազատագրական պայքարին օժանդակելու անկեղծ ցանկության առաջին արտահայտություն: Այն *արևելահայոց ուշադրությունը սևեռեց արևմտահայ խնդրի վրա:* Միաժամանակ, այդ ձեռնարկով սկզբնավորվեց հայ ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման մի երրորդ՝ հայդուկային խմբերով արևմտահայերի պայքարին օժանդակելու ուղղությունը, որն արժանացավ պահպանողական գործիչների մշտական քննադատությանը:

Ընդհանրացնելով ասենք, որ Սարկավագի գործունեությամբ Տարոնում սկզբնավորվում էր մի ուղղություն, որը նպատակաուղղված էր հայ-քրդական համագործակցության ստեղծմանն ու համաժողովրդական զինմանը, ինչպես նաև արևելահայության օժանդակությունը ձեռք բերելուն և դրա արդյունավետ ձևերի ընտրությանը: Այս ամենը հիմք է տալիս պնդելու, որ նա պահպանողական-հեղափոխական էր:

ГАЛФА АКОП САРКАВАГ – РЕВОЛЮЦИОНЕР-КОНСЕРВАТОР

ОГАНЕСЯН Э. Г.

Резюме

В конце XIX в. в армянском национально-освободительном движении принимали участие консервативно-революционные деятели, одним из ярких представителей которых был галфа Акоп Саркаваг (Акоп Тер-Гевондян). Он был сторонником всеобщего восстания и призывал армян к сотрудничеству с курдами. Однако его точку зрения не разделяли многие армянские деятели того времени, в частности Саркис Кукунян, придерживавшийся идеалистических воззрений и отрицавший необходимость всеобщего восстания на данном этапе борьбы. Соратниками С. Кукуняна и был убит галфа Акоп Саркаваг.

[9] **Ռոստոմ**…, էջ 48: